

# Մարգարեա Էդիկ Բարսեղյանի շնորհավորական ուղերձը

01.01.2012



Արարատի մարզի սիրելի բնակիչներ, շնորհավորում եմ բոլորիս Ամանորը և Սուրբ ծնունդը: Մաղթում եմ, որ գալիք տարին լինի խաղաղության ու երջանկության տարի, և սերը թևածի բոլորիս օջախներում:

2011 թվականը մարզի համար հաջողությունների և ձեռքբերումների տարի էր. դրական ցուցանիշներ են գրանցվել մի շարք բնագավառներում:

Տարին բերքառատ էր, գյուղացին հաջողությամբ իրացրեց ողջ տարվա իր քրտնաջան աշխատանքի արդյունքը: Լուրջ քայլեր ձեռնարկվեցին նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ: Իրականություն դարձան մի շարք ծրագրեր, կատարվեցին բավականաչափ աշխատանքներ: Ամրապնդվեցին բարեկամական կապերը արտասահմանյան մեր գործընկերների հետ, որն իր հերթին խթանեց առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցությունը:

Հանրապետությունում միշտ բարձր դիրք և լավ անուն ունեցող մեր մարզը, համոզված եմ, եկող տարի նույնպես կպահի առաջատարի դիրքերը, և մենք շարունակաբար հաջողություններ կգրանցենք կրթության, առողջապահության, գյուղատնտեսության, առևտրի և արտաքին կապերի, սոցիալական, մշակույթի և այլ ոլորտներում:

Վստահեցնում եմ, որ մենք կշարունակենք սատարել մեր բնակիչներին, և ինչպես նախորդ տարիներին, 2012 թվականին ևս ձեր առջև ծառայած խնդիրները կունենան լուծումներ ու միշտ կմնան մարգարետարանի ամենօրյա հոգաձության ներքո: Համազգումք ունեմ նաև, որ բոլորս միասին համախմբված և մեծ նվիրումով կիրականացնենք մեր առջև դրված նպատակները և արդյունքում կշենանա ու կզարգանա մեր սիրելի մարզը:

Միբելի հայրենակիցներ, սիրով ու ջերմությամբ կրկին շնորհավորում եմ գալիք Նոր տարին և Սուրբ ծնունդը:

Թող Հույսը, Հավատը և Մերը մշտապես ուղեկցեն ձեզ, և 2012 թվականը դառնա երազանքների իրականացման ու առաջընթացի տարի:

ԷԴԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ  
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ